«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից Թիվ ԼՎ-183 Լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում (Կապան համայնք նախկին Շահումյան բանավան) 2020թ-ին տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման (ռեկուլտիվացիայի) միջոցառումների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ 4-րդ հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

17.07.2024թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ որպես ազդակիր համայնք Կապանի մշակույթի կենտրոնի շենքում 2024 թվականի հուլիսի 11-ին, ժամը 14:30-ին տեղի ունեցավ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ կողմից Թիվ ԼՎ-183 Լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում (Կապան համայնք նախկին Շահումյան բանավան) 2020թ-ին տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման (ռեկուլտիվացիայի) միջոցառումների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 4-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետներ Գոհար Մինասյանը և Հովիկ Մեսրոպյանը, «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ բնապահպանության բաժնի մենեջեր՝ Աիդա Ալեքսանյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, ինչպես նաև այլ քաղաքացիներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Գոռ Թադևոսյանը: Նա ողջունեց ներկաներին, ներկայացրեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ «Առավոտ» օրաթերթի 2024 թվականի հունիսի 29-ի թիվ 115 (7116) համարում, ինչպես նաև ՀՀ շրջակա միջավայրի նախարարության և Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքերի հայտարարությունների բաժնում (www.env.am, www.kapan.am):

Զեկույցի համար խոսքը փոխանցվեց ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ՝ Գոհար Մինասյանին:

Զեկույց (Գոհար Մինասյան) - Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն՝ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության կողմից փորձաքննության է ներկայացվել Թիվ ԼՎ-183 Լեռնահատկացման ակտով սահմանված տարածքում (Կապան համայնքի նախկին Շահումյան բանավան) տեղի ունեցած փլուզման հետևանքների վերացման (ռեկուլտիվացիայի) միջոցառումների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը: Ինչպես գիտեք նախնական փուլն արդեն տեղի է ունեցել և այժմ ընթանում է հիմնական փուլը: Եվ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման օրենքի 4-րդ փուլը կազմակերպում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ քննարկումների պատասխանատուի հետ համատեղ՝ ձեռնարկողի մասնակցությամբ: Հաշվետվությունն ուսումնասիրվել է, ուղարկվել է տարբեր ստորաբաժանումներ, մասնագիտական կառույցներ՝ կարծիքների ստացման նպատակով: Ստացված բոլոր կարծիքները հաշվի են առնվել: Ուղարկվել է լրամշակման և լրամշակված հաշվետվությունն այս պահին Ձեզ է ներկայացված: Ուրեմն փլուզման հետևանքների վերացումը նախատեսվում է 2 փուլով: Առաջին փուլում առաջացած դատարկությունների վերացում՝ դատարկ ապարների տեղակայման միջոցով և երկրորդ փուլում՝ մակերևույթի ռեկուլտիվացում հողի բերրի շետի տեղակայման և կանաչապատման միջոցով: Տեխնիկական մասը հիմա կներկայացնի մասնագետը: Ես բնապահպանական մասով նորից կանդրադառնամ միայն ասեմ, որ ամբողջ ռեկուլտիվացման աշխատանքների համար նախատեսվում է 2 միլիոն յոթ հարյուր հիսունյոթ հազար երկու հարյուր իննսուն դրամ: Շրջակա միջավայրի վրա ազդեցությունները մեղմելու նպատակով ընկերությունը նախատեսում է որոշակի միջոցառումներ, օրինակ՝ աշխատանքները պետք է իրականացվեն միայն ցերեկային ժամերին, մթնոլորտային օդի ախտոտումը նվազեցնելու նպատակով տարվա շոգ եղանակներին իրականացվելու է ջրցան: Աշխատանքների ավարտից հետո նաև մշտադիտարկումներ են կատարվելու մթնոլորտային օդի, հողի, ջրի, կենսաբազմազանության: Այսքանը, խոսքը փոխանցենք, եթե հարցեր լինի ես կանդրադառնամ:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ այդ դեպքում խնդրեմ «Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ բնապահպանության բաժնի մենեջեր՝ Աիդա Ալեքսանյան:

Զեկույց (Աիդա Ալեքսանյան) – Ինչպես նշեց փորձագետը նախագիծը նախատեսված է իրականացնել երկու փուլով: Տեխնիկական ռեկուլտիվացիոն փոսերի լցոնումով դատարկ ապարով՝ վերգետնյա հատվածից, այնուհետև կավային մեկուսիչ շերտի ստեղծման և նաև կենսաբանական ռեկուլտիվացիան՝ բուսահողի ծածկմամբ և հետագա ցանքսով: Ցանքսը վերահսկվելու է ևս երկու տարի և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ ցանքս է իրականացվելու: Ընդհանուր առմամբ նախագիծը բոլոր քննարկումների ժամանակ մանրամասն ներկայացվել, քննարկվել է, եթե անհրաժեշտություն կա, հարցեր կան պատրաստ ենք պատասխանել:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Կա՞ն հարցեր հանրային լսման մասնակիցներ:

Հարց (Գոհար Մինասյան) – Աշխատանքների իրականացման ժամանակ թափոնները, այսինքն ոչ միայն աշխատանքների ավարտից հետո այլ աշխատանքների ընթացքում առաջացած թափոնները որտե՞ղ եք տեղակայելու:

Հարց (Աիդա Ալեքսանյան) – Կառավարման մասի՞ն է խոսքը:

Պատասխան (Գոհար Մինասյան) – Այո:

Պատասխան (Աիդա Ալեքսանյան) – Ընդհանուր առմամբ հաշվետվությունում ներկայացվել է, որ քիչ քանակությամբ թափոններ են աշխատանքների ընթացքում առաջանալու, որովհետև աշխատանքները, որպես այդպիսին ծավալով մեծ չեն և հիմնականում կառավարումը տեղի է ունենալու Կապանի լեռնահարստացման կոմբինատի թափոնների կառավարման շրջանակներում: Այսինքն՝ գոյացած յուղոտված լաթերը, որոնք կարող են գոյանալ, առանձին կուտակվելու և հանձնվելու են մասնագիտացված ընկերությանը: Յուղի արտահոսքն է կանխվելու, գոյացված յուղն է կառավարվելու նման կերպ: Իսկ որպես 5-րդ դասի թափոն հանդիսացող դատարկ ապարներ, այս պարագայում ոչ թե դրանց կառավարումն է, այլ դա միջոց է հանդիսանում ռեկուլտիվացման աշխատանքների տեխնիկական մասն ապահովելու համար:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ, Կա՞ն հարցեր: Սա 4-րդ հանրային լսումն է, նախորդ հանրային լսումներին տարբեր հարցերի շուրջ քննարկումներ եղել են կարծում եմ

դա է պատճառը, որ այսօր հարցերը քիչ են: Եվ եթե այլ հարցեր չկան հանրային լսումն համարենք ավարտված:

Խոսք (Գոհար Մինասյան) – Ոչ, ես միայն կավելացնեմ, որ այս փուլից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում կարող եք Ձեր դիտողությունները, առաջարկությունները, եթե ունեք նաև ներկայացնեք Շրջակա միջավայրի փորձաքննական կենտրոն: Այս փուլից հետո օրենքով սահմանված կարգով, եթե այլ խնդիրներ չեն առաջանում պետք է տրվի փորձաքննական եզրակացություն:

Խոսք (Գոռ Թադևոսյան) – Շատ լավ, եթե այլ հարցեր չկան շնորհակալություն եմ հայտնում բոլորին հանրային լսմանը մասնակցելու համար և հանրային լսումն համարում ավարտված:

Հանրային քննարկման պատասխանատու՝

Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

Ձեռնարկող՝

«Կապանի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ

գլխավոր տնօրեն **Սասուն Ավետիսյան**

Հանրային քննարկման վարող՝

Կապան համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ **Գոռ Թադևոսյան**

Հանրային քննարկման արձանագրող՝

Կապանի համայնքապետարանի

գյուղ. և բնապահ. բաժնի առաջատար մասնագետ **Աստղիկ Մկրտչյան**